ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

19.10.2019թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկանի պաշտոնակատար/

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան /քարտուղար/

Խորհրդի նիստին մասնակցում էին 16 անդամից 14-ը:

Նիստին մասնակցում էր ՄԿՊԿ բաժնի վարիչ Լ. Բեգինյանը:

Բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի 2018-2019 ուստարվա տարեկան քննաշրջանի արդյունքների քննարկում և ամփոփում /Զեկ. Գ Ավետիսյան/:
2. 2019 -2020 ուստարում իրականացվող պրակտիկաների ծրագրերի, պլան-ժամանակացույցերի քննարկում /Զեկ. Ա. Ալեքսանյան, Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան, Լ. Լաչիկյան/:

2.1.Լրացուցիչ պրակտիկաների /intership/ անհրաժեշտության և կազմակերպման խնդիրների քննարկում: /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/

3. «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի պատասխանատուների և ուսումնական խորհրդատուների աշխատանքային պլանների հաստատում: /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/

4. Ընթացիկ հարցեր.

4.1 Տնտեսագիտություն մասնագիտության «Տնտեսական քաղաքականություն և իրավունք» կրթական ծրագրով մագիստրատուրա բացելու մասին:/ Զեկ. Մ. Միքայելյան/

1. Լսեցին.- Ֆակուլտետի 2018-2019 ուստարվա տարեկան քննաշրջանի արդյունքների քննարկում և ամփոփում /Զեկ. Գ Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց 2018-2019 ուստարվա տարեկան քննաշրջանի արդյունքները: Նա նշեց, որ քննաշրջանը սկսելուց առաջ ամբիոնները ԿԾ ղեկավարների հետ համագործակցությամբ ուսումնասիրում են դասընթացների ծրագրերի կատարողականը, դասընթացների թեմատիկայի հարցաշարերի և տոմսերի համապատասխանելիությունը:

Գ. Ավետիսյանը նշեց, որ Տնտեսագիտության ֆակուլտետում 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանին մասնակցել է 101 ուսանող: «Ֆինանսներ», «Տնտեսագիտություն» և «Տնտեսագիտության տեսություն» կրթական ծրագրերով՝ 70 ուսանող, «Զբոսաշրջություն» և «Սերվիս» կրթական ծրագրերով՝ 31ուսանող: Քննաշրջանը հաղթահարել են 63 ուսանող, 2 ուսանող ստացել են գերազանց գնահատականներ/ տնտ. երրորդ, սերվիս չորրորդ կուրսեր/: Ֆակուլտետում բացարձակ առաջադիմությունը կազմել է 62,4%: Իսկ 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանին մասնակցել է 74 /I-IIIկուրսեր/ ուսանող: «Ֆինանսներ», «Տնտեսագիտություն» կրթական ծրագրերով 49 ուսանող, «Զբոսաշրջություն» և «Սերվիս» կրթական ծրագրերով 25 ուսանող: Քննաշրջանը հաղթահարել է 44 ուսանող, 3 ուսանող ստացել են գերազանց գնահատականներ /զբոսաշրջություն առաջին, սերվիս երրորդ կուրսեր/: Ֆակուլտետում բացարձակ առաջադիմությունը կազմել է 76,64%:

Նա նշեց, որ իրականացվել է 2018-2019 և 2017-2018 ուստարիների համար ըստ մասնագիտությունների համեմատական վերլուծություն: Որի արդյունքում երևում է, որ 2018-2019 ուստարում 2017-2018 ուստարվա համեմատ երկու կիսամյակներում էլ նկատվում է առաջադիմության աճ: Ֆակուլտետում չունենք 12 կրեդիտ պարտք ունեցող ուսանողներ: Քննաշրջանը կազմակերպվել է համապատասխան ժամանակացույցերի: Լուծարքային շրջանում քննական պրոցեսները իրականցվել են հանձնաժողովներով:

Արտահատվեցին - Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նրանք նշեցին, որ կրթական ծրագրերի ղեկավարները մասնակցել են քննաշրջանին: Այն անցկացվել է օբյեկտիվ և պատշաճ մակարդակով: Քննական արդյունքները պարտադիր քննարկվել են ուսանողների հետ: Քննական գործընթացները որևէ ուսանողի կողմից գրավոր չեն բողոքարկվել: Նրանք առաջարկեցին ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2018-19 ուստարվա քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

Որոշեցին – Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2018-2019 ուստարվա տարեկան քննաշրջանի արդյունքները ընդունել ի գիտություն:

2. Լսեցին.- 2019 -2020 ուստարում իրականացվող պրակտիկաների ծրագրերի, պլան-ժամանակացույցերի քննարկում /Զեկ. Ա. Ալեքսանյան, Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:

Ա. Ուլիխանյանը ներկայացրեց պրակտիկայի անցկացման ժամանակացույցը, նպատակը, պրակտիկայի օբեկտները և այցելության վայրերը և դրանց համապատասխանությունը տվյալ մասնագիտության առանձնահատկություններին: Ա. Ուլիխանյանը նշեց, որ «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսումնական պրակտիկաների օբյեկտները բաժանվում են երեք հիմնական տեսակների՝

1. սերվիսային ձեռնարկություններ (թանգարաններ, հյուրանոցներ, ժամանցի օբյեկտներ և այլն),
2. պատմամշակութային օբյեկտներ (եկեղեցիներ, վանքեր, հուշարձաններ և այլն),
3. բնական օբյեկտներ (բնական հուշարձաններ, լեռնազանգվածներ, գետահովիտներ):

Առաջին կուրսում «ՈՒսումնական պրակտիկա-1»-ի շրջանակներում նախատեսված են այցելություններ դեպի ՀՀ Տավուշի , Շիրակի, Սյունիքի մարզերի և Երևանի զբոսաշրջային տարբեր դեստինացիաներ (մարզային և մայրաքաղաքային պատմամշակութային օբյեկտներ՝ եկեղեցիներ, վանքեր, թանգարաններ, բնական հուշարձաններ, զբոսաշրջային ինդուստրիան սպասարկող կազմակերպություններ՝ հյուրանոցներ, զբոսաշրջային

ընկերություններ, սննդի օբյեկտներ են): Նա նշեց, որ «Զբոսաշրջություն» մասնագիտության ԿԾ –ով նախատեսված է երկու ուսումնական պրակտիկա.

1. ՈՒսումնական պրակտիկա-1, որն իրականացվում է առաջին կուրսի երկրորդ կիսամյակի ընթացքում, որը ղեկավարում է Ա. ՈՒլիխանյանը,
2. ՈՒսումնական պրակտիկա-2, իրականացվում է երկրորդ կուրսի երկրորդ կիսամյակի ընթացքում, որը ղեկավարում է Լ. Լաչիկյանը,
3. ՈՒսումնական պրակտիկա, որն իրականացվում է հեռակա ուսուցման բաժնի երկրորդ կուրսի երկրորդ կիսամյակում, որը ղեկավարում է Ա. ՈՒլիխանյանը:

Ա. Ալեքսանյանը ներկայացրեց «Տնտեսագիտություն» մասնագիտության պրակտիկայի անցկացման ժամանակացույցը: Նա խոսեց պրակտիկայի նպատակների և դրանց կազմակերպման վայրերի մասին: Ա. Ալեքսանյանը նշեց, որ որպես սկզբունք է ընտրվել ավարտական աշխատանքների թեմաների և պրակտիկայի վայրերի առավել համապատասխանեցումը:

Ա. Ալեքսանյանը նշեց, որ Ֆինանսներ ԿԾ-ում /2017-21թթ/ պրակտիկա նախատեսված է երրորդ կուրսի երկրորդ կիսամյակում: Նա առաջարկեց կազմակերպել լրացուցիչ պրակտիկաներ: Ուսանողը ուսուցման գործընթացին զուգահեռ կայցելի տարբեր կազմակերպություններ, կծանոթանա աշխատանքային միջավայրին, այնտեղ էլ ավելի կամրապնդի գիտելիքները և կմտածի կարիերայի մասին:

Ա. Սարիբեկյանը ներկայացրեց հեռակա ուսուցմամբ «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ պրակտիկայի ժամանակացույցը: Նա նշեց, որ ծրագիրը կազմվել է ըստ կրթական ծրագրի չափորոշիչների: Ա. Սարիբեկյանը արձանագրեց նաև հեռակա ուսուցման առանձնահատկությունները, ըստ որի ուսանողներին հնարավորություն է տրվել ընտրել պրակտիկայի այն վայրը, որտեղ իրենք աշխատում են:

2.1. Լսեցին-Լրացուցիչ պրակտիկաների /intership/ անհրաժեշտության և կազմակերպման խնդիրների քննարկման մասին: /Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/

Ա. Սարիբեկյանը ներկայացրեց պրակտիկայի դերի մասին, մասնավորապես արժևորելով կրթական ծրագրով նախատեսված պրատիկայի առկայությունը: Նշեց, որ

լրացուցիչ պրակտիկան էլ ավելի կարող է ամրապնդել ուսանողների գիտելիքները: Նա նշեց, որ լրացուցիչ պրակտիկայի անցկացման անհրաժեշտությունը բխում է ուսանողների գիտելիքի բազմակողմանի զարգացմանը, նոր հմտությունների ձեռք բերմանը, ինչպես նաև նպաստում է կարիերայի ձևավորմանը:

Ա. Ուլիխանյանը ներկայացրեց «Զբոսաշրջություն» մասնագիտության համար նախատեսված լրացուցիչ պրակտիկայի անհրաժեշտությունը: Նա նշեց, որ կրթական ծրագրով ներառված պրակտիկայից բացի անհրաժեշտ են լրացուցիչ պրակտիկաներ, որոնք ուսանողին հնարավորություն կտան նոր հմտությունների ձևավորմանը, իսկ գործատուին լրացուցիչ աշխատուժի ձեռք բերմանը, ինչպես նաև «աշխատողների բանկի» ձևավորմանը: Ուստի նա առաջարկեց ներկայացնել լրացուցիչ պրակտիկայի անցկացման ժամանակացույցն ու կազմակերպությունները:

Արտահայտվեցին - Գ. Հովհաննիսյանը, Լ. Բեգինյանը, Ա. Ալեքսանյանը:

Նրանք նշեցին, որ պրակտիկան նախատեսված է ուսանողների մոտ կարողություններ և հմտություններ ձևավորելուն: Գ. Հովհաննիսյանը բարձր գնահատեց պրակտիկայի ղեկավարների աշխատանքը, որն ուղղված է կազմակերպելու, ծրագրերը կազմելու և պատշաճ մակարդակով անցկացնելուն:

Լ. Բեգինյանը հավաստեց, որ պրակտիկայի անցկացման համար նախապես կատարված աշխատանքները կարելի է գնահատել բավարար: Մասնավորապես խոսվեց ԵՊՀ ԻՄ և մարզի գործատուների հետ պայմանագրերի առկայության, ինչպես նաև նոր պայմանագրերի հնարավորությունների մասին: Նա նշեց նաև, որ ուսանողի կողմից լրացված օրագիրը համարվում է հաշվետվություն տվյալ պրակտիկայի վերաբերյալ, քանի որ այն պետք է մանրամասնի պրակտիկայի յուրաքանչյուր օրվա կատարված աշխատանքը: Սակայն ուսանողները բացի օրագիրը պետք է ներկայացնեն իրականացված պրակտիկայի վերաբերյալ հաշվետվություն, որը կպահպանվի ամբիոններում:

Լրացուցիչ պրակտիկայի կազմակերպման գործընթացում Լ. Բեգինյանը նշեց, որ անհրաժեշտ են նպատակների առկայությունը, բոլոր հիմնավորումները և գործատուների

հետ հանձայնությունները, որպեսզի պատշաճ մակարդակով իրականացվի տվյալ գործընթացը:

Ա. Ալեքսանյանը նշեց, որ հանրապետությունում որոշ ԲՈՒՀ-եր կազմակերպում են աշխատանքի տոնավաճառներ, որտեղ ուսանողները ծանոթանում են գործատուների կողմից առաջարկվող աշխատանքներին: Նա նշեց նաև, որ այս դեպքում գործատուն ուղղակի տվյալ ԲՈՒՀ-ի գովազդն է ապահովում: Այդպիսի աշխատանքի տոնավաճառներ կարող է կազմակերպել մասնաճյուղի Արտաքին կապերի բաժինը՝ ֆակուլտետների աջակցությամբ:

Արտահայտվեցին- Տ. Թիրաբյանը(Տնտեսագիտություն IV կուրս), Մ. Մելիքսեթյանը (Սերվիս IV կուրս)

Նրանք նշեցին, որ ինչպես ԿԾ նախատեսված, այնպես էլ լրացուցիչ պրակտիկաները նպաստում են ուսանողի մասնագիտական գիտելիքների ամրապնդմանը, աշխատանքի ընտրության մեջ ճիշտ կողմնորոշմանը: Նրանք առաջարկեցին, որ ուսանողները նույնպես ներկայացնեն այն կազմակերպությունները, որտեղ կցանկանային իրականացնել մասնագիտական և լրացուցիչ պրակտիկաներ:

Որոշեցին. –Տնտեսագիտության ֆակուլտետի 2019-2020 ուստարում կազմակերպվող պրակտիկաների նախապատրաստական աշխատանքները համարել բավարար:

Որոշեցին. –Տնտեսագիտության ֆակուլտետի ԿԾ նախատեսված պրակտիկաների համար ուսանողների ներկայացրած հաշվետվությունները պահպանել համապատասխան ամբիոններում մինչև ԿԾ ավարտը:

Որոշեցին .- ԿԾ պատասխանատուները մինչև 2020 թ. հունվարի քսանը ներկայցնեն ամբիոններ լրացուցիչ պրակտիկաներ կազմակերպելու համար նախատեսված կազմակերպությունները և ժամանակացույց- պլանները:

3.Լսեցին.- «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի պատասխանատուների և ուսումնական խորհրդատուների 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանների հաստատման մասին: /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/

«Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների կրթական ծրագրի պատասխանատուներ Ա. Սարիբեկյանն ու Ա. Ուլիխանյանը ներկայացրեցին աշխատանքային պլանները: Նրանք նշեցին, որ ծրագրերը կազմվել են ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական ծրագրի, Տնտեսագիտության ֆակուլտետի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանի, ԵՊՀ ԻՄ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կամակերպման կարգի համաձայան:

«Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների ուսումնական խորհրդատուները ներկայացրեցին 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանները: Նրանք նշեցին, որ պլանների իրականացումը կնպաստի առաջին կուրսեցիների բուհական միջավայրի ինտեգրմանը, ուսուցման որակի բարելավմանը և այլ առանցքային հարցերի քննարկմանն ու իրագործմանը:

Արտահայտվեցին.- Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը

Նրանք նշեցին, որ թե «Ֆինանսներ», և թե «Զբոսաշրջություն» մասնագիտություններով կրթական ծրագրերի պատասխանատուների ու ուսումնական պատասխանատուների 2019-2020 ուստարվա աշխատանաքային պլանները կազմվել են ի նպաստ համապատասխան ամբիոնների արդյունավետ աշխատանքի:

Որոշեցին.- Հաստատել «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի պատասխանատուների 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանները:

Որոշեցին.- Հաստատել «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտություններ ուսումնական խորհրդատուների 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանները:

4.Ընթացիկ հարցեր.

4.1.Լսեցին.- Տնտեսագիտություն մասնագիտության «Տնտեսական քաղաքականություն և իրավունք» կրթական ծրագրով մագիստրատուրա բացելու մասին:/ Զեկ. Մ. Միքայելյան/

Մ. Միքայելյանը ներկայացրեց մագիստրոսական կրթական ծրագրի անհրաժեշտության մասին ԵՊՀ ԻՄ-ում: Մասնավորապես նա նշեց, որ մագիստրատուրայի առկայությունը կնպաստի նաև բակալավրիատի ուսանողների ավելացմանը: Բոլորը չէ, որ ֆինանսական հնարվորություն ունեն ուսանելու և ուսումը շարունակելու Երևանի բուհերում: Առավել ևս, որ դասախոսական կազմը բարձր որակավորում ունեցող/ հիմնականում մայր բուհի և ԿԲ Դիլիջան ուսումնական հետազոտական կենտրոնի, ինչպես նաև՝ ՀՀ ՊԵԿ-ի/, տեսականորեն լավ պատրաստված և պետական կառավարման համակարգի գործնական աշխատանքնի փորձ ունեցող մասնագետներ են:

Նա նշեց, որ կրթական ծրագրի մշակման համար անհրաժեշտ է ձևավորել աշխատանքային խումբ և առաջարկեց կազմը.

Միքայելյան Մ. Վ.	տնտ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ ԻՄ ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար
Հակոբջանյան Ա. Զ.	տնտ.գ. թ., դոցենտ, ԵՊՀ ԻՄ ընդհանուր տնտեսագիտության ամբիոն դոցենտ
Ավետիսյան Գ.	տնտ.գ.թ. դոցենտ, ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտություն ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար

Որոշեցին.- Հաստատել Տնտեսագիտություն մասնագիտության «Տնտեսական քաղաքակաություն և իրավունք» մագիստրոսական կրթական ծրագիրը մշակող աշխատանքային խմբի կազմը:

Գիտխորհրդի նախագահ՝ Գ. Ավետիսյան

Քարտուղար՝ *Ա.Ալեքսանյան*